մէջ։ Բայց հէնց մեր առաջ դրուած օրինակն էլ ցոյց է տալիս միեւնոյն ժամանակ, թէ ո՛րքան դժուար պիտի լինինք այսպիսի խնդիրներում. պատճառն այն է, որ թուականով յայտնի եկեղեցիների չրջանը աւելի չէ, քան կէս դար, բայց նման անթուական չէնքերի թիւն աւելի մեծ է, որ կարող են աւելի հին լինել եւ են, քան թուականով եկեղեցիները։

Բարեբաղդաբար Պաղավանքի եւ մի չարք վանքերի համար մենք ունինք մատենագրական վաւերական եւ ճիշդ տեղեկութիւններ է. դարի սկզբից, որոնց վերայ հարկաւոր

տանի եպիսկոպոսներից ոմանք։ Սրա հակառակ ժամանակի կաթուղիկոսական տեղապահ Վրդանէս քերթող եւ Սմբատ Բագրատունին աշխատում են խմբել եպիսկոպոսութիւնները ու վանահայրութիւնները հայրապետական աթոռի շուրջը եւ միութիւն հաստատել։ Այդպիսի մի միութեան ձեռնարկ Ապրուէդ Խոսրովի ժէ. տարուց, որ համապատասխան է 606 թ., հասել է մեր ձեռքը։ Մի չարք եպիսկոպոսների եւ վանքերի հայրերի հետ ձեռնարկին կամ միութեան թղթին ստորագրել է եւ «Իսրայէլ Պաղավանից»։ Այս վաւերականը մեր ձեռքն է հասել Գիրք թղթո-

Պատկ. 12

ուշադրութիւնը չենք դարձրել մինչեւ այժմ։ Գիրք թղթոցի մէջ պահուած ձեռնարկներն են դրանք կամ եկեղեցական ժողովների արձանագրութիւնները։ Յայտնի է, թէ Զ. դարի վերջերում ինչպիսի՛ երկպառակութիւններ էին ծագել հայոց եկեղեցում, Մօրիկ կայսեր վարած քաղաքականութեամբ, եւ ներսում ծագած երկպառակութիւնների ու դաւանաբանական վէճերի պատճառով։ Հայրապետական աթոռից բաժանուել էին ոչ միայն Վրացիք, այլ եւ նման ձգտումներ էին ցոյց տալիս Աղուանները, Սիւնիք եւ բիւզանդական կայսրութեան մաս կազմող Հայաս-

ցի եւ Ուխտանէսի պատմութեան մէջ, վերջինս Ժ. դարի պատմիչ է։ Պաղավանքը դոյութիւն ունէր, ուրեմն, արդէն է. դարի սկզբում եւ մէկն էր այն վանքերից, որոնց հայրերի ստորագրութիւնը նշանակութիւն ունէր Հայրապետական աթոռի միութեան պահպանութեան համար։ Այսպիսով նորա ծագման ամենաուշ ժամանակի հաստատուն սահմանն ունինք, որ 606 թուականն է։

Բայց այս վաւերականը շատ աւելի ուշագրաւ է հայ ճարտարապետութեան պատմութեան համար, քան թւում է մեզ առաջին անգամից. ձեռնարկին ստորագրողներն